



Սիրելի հայրենակիցներ,

2015 թուականը Կիպրոսի ժողովուրդին համար կը յատկանշուի դժուարութիւններու շարունակութեամբ, սակայն միեւնոյն ժամանակ զայն կրնանք համարել դրական եղելութիւններով լեցուն տարի մը: Այս տարւան ընթացքին ականատես եղանք մեր փոքրիկ կղզին յուզող երկու հիմնական հարցերու հոլովոյթներու զարգացման: Առաջինը կը վերաբերի Մայիս ամիսէն սկսեալ քաղաքական հիմնահարցի լուծման գծով արագացուած բանակցութիւններու վերսկսման եւ խոստմնալից լաւատեսութեան, իսկ երկրորդը, տնտեսական ոլորտէն ներս, 2016 Մարտին, յուշագիրէն դուրս գալու Եւրոմիութեան եւ միջազգային տնտեսութիւն արժեւորող հաստատութիւններու գնահատական զուսպ յայտարարութիւններուն: Կը սպասուի, որ այն խիստ կարեւոր եւ ճակատագրական խնդիրներու լուծումները, մեծապէս նպաստեն Կիպրոսի ապահովութեան եւ տնտեսական բարգաւաճման:



Այս հանգրուանին եւ ընթացող բանակցութիւններու լոյսին տակ, Զոկտեմբերի կիսուն, պարտք համարեցի Ազգային Իշխանութեան պատկան մարմիններն ու հայկական կազմակերպութիւններն ու միութիւնները հաղորդակից

դարձնել Կիպրոսի քաղաքական բեմին վրայ տեղի ունեցող լուրջ պատմական զարգացումներուն: Առ այդ, նամակ յղելով բոլորին, անոնցմէ խնդրեցի գրաւոր ունենալ իւրաքանչիւրին առաջարկները, ինչ կը վերաբերի կիպրահայ գաղութի դիմագիծին ու կարգավիճակին՝ հաւանական լուծումի մը պարագային: Այս բոլորը ստանալէ եւ հանդիպումներու շարքը ամբողջացնելէ ետք, միասնաբար կարելի պիտի ըլլայ Կիպրոսի կառավարութեան պատշաճ ձեւով ներկայացնել կիպրահայութեան տեսլականը երկշրջանային եւ երկհամայնքային համակարգին մէջ:

Տարեվերջի «Լրատու»ի այս թիւով, պիտի փափաքէի անգամ մը եւս անդրադառնալ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առնչութեամբ Կիպրոսի կառավարութեան ցուցաբերած անկեղծ ու եղբայրական մօտեցումին, թէ՛ կիպրահայութեան եւ թէ՛ Հայաստանի կառավարութեան հանդէպ: Կիպրոս–Հայաստան միացեալ դրոշմաթուղթի հրապարակում, Կիպրոսի Խորհրդարանին կողմէ Հայկական Ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրէնքի որդեգրում, լուսանկարներու եւ միջազգային մամուլի էջերէ քաղուած վկայութիւններու իւրայատուկ ցուցահանդեսի իրագործում, առաւել եւս 24 Ապրիլ 2015-ին, Երեւանի մէջ կայացած Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման արարողութիւններուն Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Նիկոս Անաստասիատիսի անձնապէս մասնակցութիւն: Բոլոր վերոյիշեալ միջոցառումները, յարգելի ընթերցողներ, չեն կրնար չվկայել Կիպրոսի ժողովուրդին խոր հանդուժումն ու յարատեւ զօրակցութիւնը՝ հայ ժողովուրդի արդար դատին նկատմամբ:

Յիշեմ նաեւ, թէ Նոյեմբերի սկիզբը, արդիւնաւէտ հանդիպում մը ունեցայ Կիպրոսի Պետական Համալսարանի տնօրէն Դոկտ. Կոնստանդինոս Խրիստոֆիտիսին հետ, երկու կարեւոր հարցերով: Առաջինը՝ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի եւ Կիպրոսի Պետական Համալսարանի մի-

ջել փոխգործակցութեան ծրագիրի մը քննարկումն էր, իսկ երկրորդը՝ որ իսկապէս մեծ ուստում մըն է, կը վերաբերէր Կիպրոսի հայ համայնքի արխիւային նիւթերու թուայնացման (Digital Archive) գործընթացին, որոնց իրականացման համար հաւանականութիւնները մեծ են:

Իսկ Դեկտեմբերի մէջ, Պաֆոսի մէջ ապրող մեր հայրենակիցներէն երկու ներկայացուցիչներ ներկայանալով, ինձմէ խնդրեցին որպէսզի հաստատեն Հոկտեմբերի մէջ 77 անհատներու ներկայութեամբ իրենց գումարած ժողովին արդիւնքը, ուր անոնք միաձայնութեամբ ընտրած էին յանձնախումբի ատենապետն ու փոխ-ատենապետը: Ողջունելով այս կարելոր քայլը, գրաւոր համաձայնութիւնս տուի, որպէսզի յաջորդ տարուրնէ սկսեալ, ընկերային ու մշակութային միջոցառումներ կազմակերպելով, իրենց շուրջ համախմբեն Պաֆոսի մէջ ապրող մեր հայրենակիցներն ու երիտասարդութիւնը, այս ձեւով ներդրում ունենալով հայապահպանման աշխատանքին:

Աւելորդ կը նկատեն անդրադառնալու Երեսփոխանական Գրասենեակի ընդհանուր գործունէութեան, որ ինչպէս գիտէք, նոյն թափով շարունակեց իր աշխատանքը ամբողջ տարուան ընթացքին, տարբեր ոլորտներէ ներս գոհացում տալով մեր հայրենակիցներուն ու կիպրահայութեան կարիքներուն:

Սիրելիներ,

Շնորհաւորելով ձեր բոլորին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթանքս է, որ 2016-ը աշխարհին բերէ խաղաղութիւն եւ ըլլայ բարեբեր ու բախտաւոր տարի մը թէ՛ մեր Հայրենիքին ու Արցախին եւ թէ՛ համայն հայութեան համար:

Վարդգէս Մահտեսեան

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Կիպրահայ գաղութի կեանքէն

Ուրբաթ, 16 Յոկտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ Պրն. Աշոտ Ղուլեանի, այցելեցին Նիկոսիոյ Նարեկ Հայկական Վարժարան, Ազգային Առաջնորդարան ու Ս. Աստուածածին եկեղեցի: Իսկ Շաբաթ, 17 Յոկտեմբերին, իրենց տիկիններուն հետ, ներկայ գտնուեցան «ՆԱՆՕՐ» մանկապատանեկան պարախումբի փորձին, Նարեկ Վարժարանի սրահին մէջ: Նշենք, որ Տէր եւ Տիկին Աշոտ Ղուլեան, Կիպրոս այցելած էին ներկայ գտնուելու Տոքթ. Էլէնի Թեոխարուսի դրստեր պսակի արարողութեան:

Կիրակի, 18 Յոկտեմբեր 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբին կազմակերպած հաւաք-գրոյցին, որ տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Ս.–Հ.Ե.Ս.–ի ակումբին մէջ: Օրուան զեկուցաբերն էր Եւրոպայի Հայ Դատի Գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեան, որ մանրամասնութեամբ ներկայացուց 2015-ին Եւրոպայի տարածքին մէջ Հայ Դատի Յանձնախումբին տարած աշխատանքները:

Հինգշաբթի, 22 Յոկտեմբեր եւ Ուրբաթ, 23 Յոկտեմբեր 2015-ին յաջորդաբար, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, Պաֆոսի եւ Նիկոսիոյ մէջ, ներկայ գտնուեցան Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբն կազմակերպած աննախընթաց համերգներուն՝ մասնակցութեամբ Կիպրոսի սիմֆոնիք նուագախումբին եւ խմբավարութեամբ Կիպրահայ տաղանդաւոր մանսթրօ Հայկ Իւթիւճեանի:

Կիրակի, 25 Հոկտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Զ.Օ.Մ.-ի «Սօւտ» մասնաճիւղի կազմակերպած Աշնանային ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ Զ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ի ակումբին մէջ:

Չորեքշաբթի, 4 Նոյեմբեր 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Վարդան Թաշճեանի «Նշենիներ յուշերու շարքէն» նոր հատորի շնորհահանդես-գինեծօնին, որ տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի «Վ. Իթիւճեան» սրահին մէջ: Այս ձեռնարկը կը վայելէր Պետական Ներկայացուցիչին նախագահութիւնը:



Ուրբաթ, 6 Նոյեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Ռուբէն Նահապետեանի նախաձեռնութեամբ կազմակերպուած՝ Էտկար Շահինի գեղանկարչական հաւաքածոյի ցուցահանդեսին, որ



տեղի ունեցավ Նիկոսիոյ Centre of Visual Arts and Research-ին մէջ: Ցուցահանդէսը կը վայելէր Պրն. Վարդգէս Մահտեսեանի հովանաւորութիւնը:

Շաբաթ, 14 Նոյեմբեր 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Սկաուտական խոստման արարողութեան, որ տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ե.Ս.-ի ակումբի նոր մարզադաշտին մէջ:

Չորեքշաբթի, 18 Նոյեմբեր 2015-ին, Պետական ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Համազգայինի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած մշակութային երեկոյին, որ տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ե.Ս.-ի ակումբին մէջ:

Կիրակի, 22 Նոյեմբեր 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Անուանակոչութեան տօնին առիթով մատուցուած Ս. Պատարագին եւ մատաղօրհնութեան արարողութեան:

Հինգշաբթի, 26 Նոյեմբեր 2015-ին, Պետական ներկայացուցիչը Երեսփոխանական Գրասենեակին մէջ, հանդիպում-հարցազրոյց մը ունեցաւ Պէյրութի «Ծաղիկ» գրա-

կան հանդեսի արտոնատր եւ խմբագիր Յակոբ Տիւնեայեանի հետ:

Նոյն օրը, Պրն. Վարդգէս Մահտեսեան, ծանօթացման տեսակցութիւն մը ունեցաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան փոխ-վարչապետ Արթիւր Աղաբէկեանի հետ, որ տեղի ունեցաւ Երեսփոխանական Գրասենեակին մէջ,



ներկայութեամբ ՀՀԴ Կիպրոսի Կոմիտէութեան ներկայացուցիչներուն: Նշենք, թէ Պրն. Աղաբէկեան Կիպրոս կը գըտնուէր, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հրաւերով, 125-ամեակի տօնակատարութեան ձեռնարկին որպէս բանախօս:

Ուրբաթ, 27 Նոյեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը հովանաւորելով ներկայ գտնուեցաւ Համազգայինի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած՝ Դալար Գույումճեան-Թորոսեանի Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ տեսարժան վայրերու լուսանկարչական ցուցահանդէսին, որ տեղի ունեցաւ «Xilemboriki Areos 17» շէնքին մէջ: Բացու-

մը կատարեց Նիկոսիոյ քաղաքապետ Կոնստանդինոս Եորկաճիս:

Շաբաթ, 28 Նոյեմբեր 2015-ի առաւօտեան, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Peace Centre Cyprus-ի կազմակերպած «Վստահութեան վերակառուցում Կիպրացիներուն միջեւ» միջոցառումին, որ տեղի ունեցաւ Goethe Institute-ի դասախօսութիւններու սրահին մէջ: Կիպրահայ համայնքին կողմէ իր խօսքը ներկայացուց Նարեկ Չայկական Վարժարաններու տնօրէնուհի Վերա Թահնազեան:

Նոյն օրը երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցան Չայ Յեղափոխական Դաշնակցութեան Կիպրոսի Կոմիտէի կազմակերպած ԶՅԴ 125-ամեակի հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Նարեկ Վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ՝ Կիպրահայ Չամայնքի Պետական Ներկայացուցիչին:

Երկուշաբթի, 2 Դեկտեմբեր 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան, հանդիպում մը ունեցաւ Քանատայի Չայ Աւետարանչական Ընկերակցութեան նախագահ Միհրան Եիզնէճեանի հետ:

Կիրակի, 6 Դեկտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Վիքթորիա փողոցին վրայ գտնուող Ս. Աստուածածին տաճարին մէջ մատուցուած Ս. Պատարագի արարողութեան:

Կիրակի, 20 Դեկտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Զ.Օ.Մ.-ի «Սօւէ» մասնաճիւղի կազմակերպած ճաշատեսակներու տօնավաճառին, որ տեղի ունեցաւ Զ.Մ.Ը.Մ.-Չ.Ե.Ս.-ի ակումբին մէջ:

Երեքշաբթի, 22 Դեկտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Նիկոսիոյ

Նարեկ Վարժարանի Նախակրթարանի եւ Միջնակարգի Կադանդի հանդեսին, որ տեղի ունեցաւ դպրոցի սրահին մէջ:

Ուրբաթ, 25 Դեկտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Լառնաքայի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ Անուանակոչութեան արարողութեան եւ մատաղի օրհնութեան:

Նոյն օրը երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Զ.Ս.Ը.Ս.-Յ.Ե.Ս.-ի կազմակերպած տարեկան պարահանդէսին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Lemon Park» սրահին մէջ:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ձեռնարկներ

Զինգշաբթի, 1 Հոկտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպեցաւ Հայաստանի Հանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի դեսպանութեան զինուորական կցորդ գնդապետ Ալեքսէյ Աբրահամեանի հետ, որ Կիպրոս կը գտնուէր մասնակցելու Կիպրոսի Անկախութեան տօնին առիթով կազմակերպուած զօրահանդէսին:

Երկուշաբթի, 5 Հոկտեմբեր 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան յատկապէս հրաւիրուելով Ռուսիոյ դեսպանին կողմէ, ներկայ գտնուեցաւ հայազգի երաժիշտ-յօրինող Դաւիթ Մնացականեանի համոյթին, որ տեղի ունեցաւ Ռուսական Մշակութային Կեդրոնին մէջ: Նշենք, թէ Պրն. Մնացականեան 40 երկար տարիներ ծառայած է նաեւ Ռուսիոյ Դաշնութեան Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ:

Ուրբաթ, 9 Հոկտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցաւ Մարոնիթ Համայնքի կազմակերպած «Աջակցիլ Կիպրական Դաշ-

նակցութեան» խորագիրով միջոցառումին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Home for Cooperation-ի մէջ:

Կիրակի, 11 Յոկտեմբեր 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ գեղանկարիչ Վարդան Ղազարեանի ցուցահանդէսին, որ տեղի ունեցաւ Trakasol Մշակութային Կեդրոնին մէջ Limassol Art Festival-ի ծիրէն ներս:

Հինգշաբթի, 15 Յոկտեմբեր 2015-ին, երեք Կրօնական Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչները՝ Մարոնիթ, Հայ եւ Լատին, հանդիպեցան Մարդասիրական, Փոքրամասնութիւններու եւ Սփիւռքի հարցերով նախագահական յանձնակատար Ֆոտիս Ֆոտիուի հետ, զրուցելու երեք համայնքները յուզող կարգ մը հարցերու շուրջ:

Երեքշաբթի, 27 Յոկտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Վիքթորիա փողոցի Ս. Աստուածածին տաճարի ու համալիրի «Europa Nostra» մրցանա-



կին արժանանալուն առթիւ կազմակերպուած ընդունելութեան: Այս ձեռնարկը, նախաձեռնութիւնն էր Եւրոպական Յանձնաժողովի Կիպրոսի Ներկայացուցչութեան եւ «Europa Nostra» կազմակերպութեան:

Հինգշաբթի, 5 Նոյեմբեր 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Պետական Համալսարանի տնօրէն Դոկտ. Կոնստանդինոս Խրիստոֆիտիսի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստանի Ամերիկեան Համալսարանի հետ փոխգործակցութեան ծրագիրի մը եւ կիպրահայ համայնքի արխիւային նիւթերու թուայնացման (Digital Archive) կարելիութիւնները:

Երկուշաբթի, 9 Նոյեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Եաննակիս Օմիրուի դասախօսական ձեռնարկին «Երբ մշակոյթ մը ձգնաժամին կը դիմանայ» խորագիրով, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Cleopatra պանդոկին մէջ:

Երեքշաբթի, 24 Նոյեմբեր 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Լեհաստանի Հայ Փոքրամասնութեան Ներկայացուցիչ եւ Կիպրոսի մօտ Մալթայի Ռազմական Կարգի հայազգի դեսպան Edward Mier-Jędrzejowicz-ին հետ:

Ուրբաթ, 27 Նոյեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Պետական Համալսարանի Մարդասիրական Դպրոցի եւ Արեւելագիտութեան Բաժանմունքին կազմակերպած «Ո՞ւր Կ'երթաս, Թուրքիա» խորագիրով միջոցառումին, նուիրուած Հրանդ Տինքի յիշատակին, որ տեղի ունեցաւ համալսարանի սրահին մէջ:

Երեքշաբթի, 2 Դեկտեմբեր 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան Ռուսիոյ դեսպանութենէն հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցաւ Ռուսիոյ Դաշնութեան Արտաքին Գործերու նախարար Սերկէյ Լաւրովի Կիպրոս պաշտօնական

այցելութեան առիթով սարքուած ընդունելութեան:

Հինգշաբթի, 10 Դեկտեմբեր 2015-ին, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը յատուկ տեսակցութիւն մը ունեցաւ Յոյն կիպրացի բանագնաց Անտրէաս Մալոտեաննիսի հետ, այս հանգրուանին, ընթացքի մէջ գտնուող բանակցութիւններու լոյսին տակ քննարկելու Կիպրահայութեան կարգավիճակին հետ առնչուող կարգ մը հարցեր:

Նոյն օրը, երեկոյեան, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Համակիպրական Իրաւաբանական Միութեան կազմակերպած միջոցառումին՝ նուիրուած Մարդկային Իրաւունքներու Միջազգային Օրուան, որ տեղի ունեցաւ Կիպրոսի Բարձրագոյն Ատեանի սրահին մէջ:


«ՆԱՆՕՐ» մանկապատանեկան պարախումբ



Շաբաթ, 19 Դեկտեմբեր 2015-ին, Նարեկ Վարժարանի սրահէն ներս տեղի ունեցաւ աւանդական դարձած «Նանօր» մանկապատանեկան պարախումբի Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի առիթով կազմակերպուած հաւաքոյթը: Փոքրիկները հաճելի եւ ուրախ պահեր անցուցին ներկայու-

թեանք Պետական Ներկայացուցիչին ու ծնողներուն: Պրն. Մահտեսեան խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեց երեխաներուն, անոնց հետեւողական մասնակցութեան համար: Շարունակելով իր խօսքը, ան իր շնորհակալութիւնը յայտնեց նաեւ պարուսոյց Պրն. Գրիգոր Քէլէշեանին, անոր ցուցաբերած համբերութեան ու նուիրուածութեան համար: Ապա, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ կաղանդ-չէփ բաշխում, որմէ ետք պարախումբի անդամները գոհունակութեամբ մեկնեցան սրահէն:

Այցելութիւն «Գալայճեան» Հանգստեան Տուն



Հինգշաբթի, 24 Դեկտեմբեր 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ընկերակցութեամբ Կաթողիկոսական Փոխանորդ Նարեկ Արքեպիսկոպոսի, այցելեցին «Գալայճեան» Հանգստեան Տուն եւ Ամանորեայ ու Ս. Ծննդեան լաւագոյն մաղթանքներով ու անհատական նուէրներով, պատուեցին տարեց հայրերն ու մայրերը:

Վարդգես Եւ Մակի Մահտեսեաններ

Կը շնորհաւորեն համայն հայութիւնը

Ամանորի եւ Ս. Ծննդեան

զոյգ տօներուն առիթով՝

մաղթելով աշխարհին խաղաղութիւն

իսկ Կիպրոսին ու Հայաստանին

բարօրութիւն եւ փայլուն ապագայ

Թարմացնելու համար «Լրատու»ի
 հասցեացանկը, Կիպրահայ գաղութի
 անդամներին եւ մեր
 հայրենակիցներին կը խնդրուի կապ
 հաստատել Երեսփոխանական
 Գրասենեակին հետ հեռաձայնելով
 22454540 թիւին, ճշդելու համար
 բնակարաններու հասցէները եւ կամ
 տեղեակ պահելու այլ
 փոփոխութիւններու մասին:

Շնորհակալութիւն

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
 Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42
 Ել. Հասցէ office@armenianmp.com
 Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
 Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42
 Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy